

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ն. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

1.

Գաղափարական իմաստով «Վերք Հայաստանի» վեպը կառուցված է երկու հիմնական, նույն բարձրության վրա գտնվող սյուների վրա՝ ազգային ինքնագիտակցության արթնացման և Ռուսաստանի նկատմամբ ունեցած բարեկամության:

Տեսնենք նախ առաջինը:

Ազգային ինքնագիտակցության արթնացման խնդիրը, հազիվ նշմարված «Վերքի» սևագրությունում, շեշտված հանգես է գալիս նրա մաքրագիր, ավարտված օրինակում: Անլուր հալածանքները, սպանություններն ու կոդապուտը, ֆիզիկական և հոգևոր ստրկությունը Աբովյանի հերոսներին մղում են մրտաժելու և քննելու այդ ամենի բուն պատճառը: Եվ ահա ծագում է անխուսափելի հարցը. ո՞վ ենք մենք, և դրան անմիջապես հարող՝ ինչու ենք գտնվում այս գրության մեջ:

Աբովյանի գյուղացիների մշտական դժգոհությունը իրենց հոգևոր հովիվներից ոչ այնքան նրանց տված կրթության (ավելի ճիշտ՝ գրագիտության) աստիճանին է վերաբերում, ոչ էլ նույնիսկ դասավանդման սխուստիկ մեթոդներին, որքան իմաստազուրկ, անհեռանկար կրթությանն ու դաստիարակությանը: Այս գյուղացիները ծարավ են գիտենալու իրենց ժողովրդի պատմությունը, քանի որ այդ պատմության մեջ են ցանկանում փնտրել պատասխանն այն հարցի, թե իրենք կարո՞ղ են հարատևել ու ապրել իբրև հայ:

Նույնիսկ Աղասու առաջին սխրագործությունը հայրենի գյուղում տարերային բնույթ է կրում: Նա չի կապում այդ ընդվզումը որևէ հեռանկարի հետ. հետագա հարձակումները պարսիկների վրա նույնպես չեն կապվում հատկապես ռուսների առաջխաղացման և Երևանի ազատագրության հետ: Աղասին հետո է հանգում այդ մտքին: Ավելի ճիշտ՝ հնգամյա նրա թափառումների պատմությունը նրա մտքի արթնացման պատմությունն է: Ո՞վ է ինքը, ի՞նչ ազգի զավակ, որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում:

Այս տեսակետից Աղասին հիշեցնում է ռոմանտիկական հերոսներին: Նրա հայացքների վրա վճռական ազդեցություն է գործում Անի քաղաքի հայտնաբերումը, ո՞չ թե ավերակների, իհարկե, այլ պատմական Անիի, այն Հայաստանի հայտնաբերումը, որ հազար տարի առաջ Անի է ունեցել:

Ամբողջ վեպի ընթացքում արթնանում է ոչ միայն Աղասին. արթնանում են համարյա բոլորը: Աբովյանը ցույց է տալիս, որ այս անլուր կոտորածներն ու բնաջնջումը լցնում են ժողովրդի համբերության բաժակը: Իհարկե, նա այդ բռնություններն ու գերեվարությունները, մասսայական տեղահանություններն ու թալանը վերջին հաշվով կապում է Ռուսաստանի՝ դեպի հարավ կատարվող արշավանքների հետ, բայց այստեղ-այնտեղ զենք վերցրած հայ քաջորդիներին չի կապում դրա հետ: Ի վերջո՝ ներսես աշքեպիսկոպոսի գործունեությունը

վեպից դուրս ծավալվող գործողությունն է։ Աբովյանի հերոսները ոչ մի պատկերացում չունեն ազատագրական մտքի արթնացման նախորդ շրջանի գործիչների մասին. նրանք անտեղյակ են նույնիսկ Դավիթ-Քեկի հերոսամարտերին։

Պատահաբար է այդպես ստացվել, թե՞ դա հեղինակի որոշակի մտածողության արդյունքն է։

Իհարկե, պատահաբար չի ստացվել։

Մինչև վերջ հավատարիմ մնալով պատկերվող իրականությանը, Աբովյանն առաջ չի քաշում ոչ մի գաղափար, որ հարազատ ու տիպական չլինի այդ իրականությանը։ Ազգային ինքնագիտակցության զարգացումը և՛ հետևանք էր, և՛ պատճառ ժողովրդի տարերային ելույթների։ Ռուս քրիստոնյա թագավորի օգնությամբ ազատագրվելու հույսը մեկ մոտենում, մեկ անսահման հեռանում էր նրա հերոսների համար։ Առավել կարևորն այն էր, սակայն, որ այդ ազատագրությունը դիտվում էր իբրև մի գործողություն, մի հանդիսավոր պահ։ Նրա հերոսները շատ ազոտ պատկերացում ունեն այդ օրվան հաջորդող մյուս օրերի մասին։ Լավագույն դեպքում նրանք այն կարծիքը ունեին, որ մի որոշ ժամանակ ուսսական տիրապետության տակ մնալուց, ծանր վերքերը բուժելուց ու կաղդուրվելուց հետո կստեղծեին կամ կունենային իրենց պետականությունը։ Իր պատմական առաքելությունը կատարելուց հետո ուսսական ցարը պետք է ողորմածաբար ազատություն և անկախություն տար Անդրկովկասի առնվազն երկու ժողովուրդների՝ հայերին ու վրացիներին։

«Վերք Հայաստանին» աշխարհաբար գրված առաջին վեպն էր հայ նոր դրականության մեջ, որտեղ հստակորեն առաջ էր քաշվում ազգության գաղափարը։ Մեր գիտնականներից ոմանք Աբովյանի գործածած ազգ հասկացությունը մեկնաբանում են իբրև ժողովուրդ։

Այդպե՞ս է արդյոք։

Ազգության գյուտը Աբովյանինը չէր, իհարկե, այլ պատմական տվյալ ժամանակաշրջանինը։ Նա ականատես էր լինում դարերի ու հազարամյակների հնությունից եկած մի ժողովրդի ազգ դառնալու պրոցեսին։ Այդ պրոցեսը տեղի էր ունենում ոչ միայն հայերի, այլև Անդրկովկասի մյուս ժողովուրդների՝ վրացիների և ադրբեջանցիների համար։ Աբովյանը հիանալի գիտակցում էր, որ ազգն ավելի լայն հասկացություն է, քան ժողովուրդը, որ ժողովուրդ հասկացությունն ինքնին մտնում է ազգության մեջ, բայց վերջինս առաջինի մեջ չի մտնում։

Այլ տեսակետի կանգնած գիտնականները իրենց հաշիվ չեն տալիս այն բանում, որ եթե Աբովյանը ազգ և ժողովուրդ բառերի մեջ տարբեր իմաստ չդնեն, նա ոչ մի նորություն էլ բերած չէր լինի մեր հասարակական մտքի պատմության մեջ։ Ազգասին վեպի առաջին էջերում հանդես է գալիս որպես հայ ժողովրդի հարազատ զավակ, իսկ վերջին էջերում մեռնում է իբրև հալ ազգի գիտակից անդամ։

Իրոք, հենց դրա համար էլ գրված է «Վերք Հայաստանին»։

Վեպի ստեղծագործական պատմությունը բաց է անում մի կարևոր հանդամանք. երրորդ զլխի ամբողջ պատմական ակնարկը գրված և վեպի ձեռագրի մեջ է տեղադրված հետո, մոտավորապես 1844 թ.։

Իսկ ի՞նչ նպատակ է հետապնդել դրանով հեղինակը։

Միայն մի նպատակ. խորացնել պատմական ֆոնը։ Յույց տալ, որ հակառակ իշխող գաղափարախոսության, հայ ժողովուրդը բնավ էլ չի ուզում

հաշտվել իր ստրկական վիճակին և չէր էլ հաշտվում: Նույնիսկ թշնամին է ընդունում, որ հայի հիմնական հատկանիշը տոկունության, ըմբոստության ոգին է. «Արևի, անձրևի, կոռի, բեգյարի տակին չորացել՝ չոփ են դառել, էլի որ մեկի մաղին դիպչում ես, ասլան ա դառնում, մարդի պատռում» (III, 129): Շատ անգամ է Աբովյանը վերադառնում աշառու պատմագրության հարցին: Նա բազմաթիվ փաստեր է բերում, ցույց տալու, որ հայի համար բնորոշը ոչ թե ստրկամտությունն է, այլ աղատասիրությունը: «Կարելի է՝ թե պատմությունը՝ որ Հայի համար քոռացել՝ մեծ մեծ ազգերի ա ղուլուղ անում, էլի մոռանա, բայց ազգասեր Հայն ի՞նչպես չպաշտի էն արծափեցի Սանուկ աղայի գերօրինակ քաջությունը ու հսկայությունը, որ Բայազիդ շառած՝ առյուծի պես քառասուն քաջ հայազգի քամակին՝ Մասսա սարին նայելով, իր ազգի մեծությունը միտքը բերելով՝ թե էր առել, սար ու ձոր ոտնատակ տալիս, փաշին ու բոլոր Բայազիդու գավառը պահում, քրդերին քարեքար տալիս, հալածում» (III, 123): Հետևողական կերպով փնտրելով ժողովրդական անանուն հերոսների, նա գերազույն պատկառանքով ու հիացմունքով է խոսում ոչ միայն նրանց քաջություն, այլև տոկունության մասին. դրանցից շատերը փոքր ու մեծ խմբեր կազմած՝ զինված դիմադրություն են ցույց տալիս տարիներ շարունակ: Ահա՛ ձեզ Գրիգոր եպիսկոպոսը, որ հռչակվեց իր հայրենի Շամշադինում կատարած քաջագործություններով, ահա՛ նրա եղբայր Գալուստը, ահա՛ շուլավերցի Սոսն ու Հոհանջանը, խլդարաքիլիսեցի Սարգիսը, դսեղցի Հովակիմ Թումանյանը և ուրիշներ: Սրանք բոլորն էլ մի-մի Աղասի էին՝ առանց իրենց Աբովյանն ունենալու: Բայց «Վերքի» հեղինակը չի բավականանում քաջերի անունները հիշատակելով, նա կանգ է առնում նաև մասսայական քաջությունների ու հերոսությունների վրա: Հենց միայն խլդարաքիլիսայի հերոսամարտը դրա լավագույն ապացույցն է:

Աբովյանի սիրած հերոսը, որքան էլ միամիտ քաղաքական հարցերում, երազում էր ստրկության լուծը թոթափված տեսնել անմիջապես, չսպասելով դրսի օգնության: Ինչքան ուշանում էր այդ օգնությունը, այնքան հրամայական էր դրվում ազգային ինքնաձանաչության, ինքնագիտակցության դերը. միայն ստրկահոգի մարդն է երազում, որ իրեն ազատեն, ստրկությանը չհաշտված գերին ինքն է ջանք թափում խորտակելու իր շղթաները:

Ո՛չ, ազգ ասելով ժողովուրդ չէր հասկանում Աբովյանը, թեև նա էլ, նախ բանդյանի նման, ազգության հիմքը, բովանդակությունը և էությունը համարում էր ժողովուրդը: Ազգությունը շատ ավելի բարդ օրգանիզմ է, քան ժողովուրդը: Պատմական այն իրադրության մեջ, որ ստեղծվել էր անցյալ դարի քսանական թվականներին, հայ ժողովուրդը իր ֆիզիկական և հոգևոր գոյությունը կարող էր պահպանել՝ կազմակերպվելով որպես ազգ: Պատասխանելով դեռևս Հարությունի տված այն հարցին, թե «Ո՞վ ենք մենք», — հեղինակն ասում է, որ մենք մի ժողովուրդ ենք, որը հարուստ պատմություն ունի: Բայց մենք պատմական աշուղ չենք, շարունակում է նա, այսինքն մի ազգ, որ արդեն պատմությանն է պատկանում: Մենք կենդանի ազգ ենք, ոչ թե մեռած: Ապացույց՝ որպես ազգ համախմբվելու նրա ձգտումը: Չի կարելի նրա անցյալը վկայակոչել և կանգնած մնալ տեղում: Անցյալի համար վկաները դառնում են անցյալի խոսուն վկաներ, երբ գիտենք նրանց լեզուն: Անիի ավերակները իրենց լռությամբ շատ ավելի բան են ասում Աղասուն, քան տասնյակ գրավոր ու բանավոր քարոզներ:

Եվ այսպես, ժողովուրդ էինք, դառնում ենք ազգ։ Որովհետև ունենք հայրենիք, ունենք տնտեսական կյանք, ունենք լեզու, կուլտուրայի ընդհանրություն, սովորություններ, հոգեբանություն։ Թող որ դրանցից վերջինները սաղմնային վիճակում գտնվելիս լինեն։

Ազգային ինքնագիտակցությունը վերաբերում է ժողովրդի բոլոր խավերին։ Աբովյանին այնքան չի մտահոգում ազգի տգետ կամ լավ է ասել՝ անգետ անդամի վիճակը, որքան նկարագիրը այն անդամի, որ դեռ չհասցրած ազգի գիտակից, կուլտուրական անդամ դառնալ, արդեն հասցնում է այլասերվել։ Խոսքը միայն լեզվին չի վերաբերում, խոսքը վերաբերում է նրա հոգեբանությունը։ Ստրկական քծնանքը տնտեսապես հղորների նկատմամբ քաղաքային մանր բուրժուազիայի մի մասին, բայց առանձնապես շինովնիկությունը տանում է դեպի խորթացում ազգային այն արժեքներից, որոնց նա այդպես էլ անհասու մնաց։ Այս թեման արտահայտվում է դեռևս վեպի սևագրության մեջ, բայց մաքրագրում այն ստանում է իր ավարտուն ձևակերպումը։ Նա այլևս չի վախենում այն բանից, որ քաղաքային այլասերված վերնախավը երես է դարձրել սեփական ժողովրդից։ Նա ոչ մի պատրանք չի կապում այդ մտավորականության հետ։ Նա հիանալի գիտե, որ պատմական այս օրերին ով իր ազգի հետ չէ, նա ոչ մի ազգի հետ էլ չէ։ Իր անգրագետ գյուղացիներին նա հաղար անգամ բարձր է դասում կեղծ գրագիտություն ստացած շինովնիկներից։ Ամեն ինչ նա ժողովրդի այդ անարատ ղավակների մեջ է տեսնում։ Քաջություն, աղնըվություն, մարդասիրություն, հայրենասիրություն, իսկական ծարավ լուսավորության ու գիտության նկատմամբ։ Նրանց և նրանց ղավակների հետ է կապում մեր լուսավորիչն իր բոլոր հույսերը։ «Մենք որ իրար թասիբ քաշենք, իրար քոմակ անենք, իրար պայծառացնենք, շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա, մեղ տակով չի՛ կարալ անիլ, ի՛նչ թե Օսմանցին, յա Պարսիկը» (III, 60)։ Հայտնի է լայնորեն, որ Աբովյանի համապարփակ, բարձրաթիչ հումանիզմին օրդանապես խորթ են ազգային սահմանափակությունն ու շովինիզմը։ Ֆիզիկական ոչնչացման դատապարտված ժողովրդի վիճակն անգամ նրան չի կարողանում մղել ծայրահեղության, չի աղարտում նրա բյուրեղյա հայրենասիրությունը։ Ահա՛ թե ինչու համարձակորեն ու հպարտությամբ է խոսում նա իր ազգի մասին։

Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում հայ ժողովրդի ըմբոստություն, նրա հերոսականության գաղափարն այնպես չէր արտահայտել, որ նկատել չլիներ։ Իրոք, շատ տանջանք ու տառապանք, շատ վերք ու վիշտ կա այդ գործում, բայց կա և կովի կոչ, կա հավատ ժողովրդի նկատմամբ։ Եթե Աղասին էր «Վերքի» հերոսը, ապա այն չէր կարող սովորական առումով «ողբ» լինել։ Դեռևս նախադրյալն է դիտել այդ հանդամանքը։ «Վերքի» մեջ, — ասում է նա, — մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը։ Այստեղ, որպես մի կախարդական հայելու մեջ, ցույց է տալիս բանաստեղծը հայոց ազգի բնական կյանքի անշուք և անմխիթար պատկերները... դրա հետ միաժամանակ «նա ցույց է տալիս Աղասու ընկերներով, թե ոչ բոլորովին սառել է արյունը Հայաստանի ղավակների երակներում»։¹

¹ Մի ք. Ն ա լ ր ա ն դ յ ա ն, Նրկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Երևան, 1945, էջ 279։

2.

Աբովյանի ռուսասիրությունը շատ ավելի լայն հասկացություն է, քան հայ ժողովրդի ազատագրության գործում Ռուսաստանի ունեցած մասնակցության կամ դերի հարցը: Առաջինը կապված է նրա աշխարհայացքի հետ, երկրորդը՝ տվյալ ժամանակահատվածում ունեցած նրա քաղաքական մտածողության:

Այն հանգամանքը, որ «Վերք Հայաստանի» վեպի սեագիր տարբերակում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցը եղած խորությամբ չի արտացոլվել, չպետք է մեզ այն եզրակացության մղի, թե դա աշխատանքի այդ փուլում հարկ եղած լրջությամբ չի էլ գիտակցվել: Ինչպես որ «Վերքը» չի պատկերացվել ազգային-ազատագրական գաղափարներից անկախ, այնպես էլ այդ ազատագրությունը չի մտածվել առանց Ռուսաստանի անմիջական, ղինված օգնության կամ միջամտության: Այդ գաղափարը գեղարվեստական երկում կարող է իր դրսևորումը գտնել առանձին արտահայտությունների, մըտքերի մեջ, կարող է և չգտնել. դա վճռական նշանակություն չունի: Տվյալ դեպքում այդպիսի նշանակություն ունի հենց գեղարվեստական գաղափարը: Չունենար այդ գաղափարը վեպի սեագրությունը, «Վերք Հայաստանի» մասին խոսք չէր կարող լինել:

Եվ ահա, սեագրությունից սկսած, տեղ են գտնում նաև այդ գաղափարն ամրապնդող առանձին արտահայտություններ: Բարեկենդանի օրը, քեզխուդաների քեֆը բաց անելով, տերտերն ասում է. «Աստված աշխարհիս խաղաղություն, թագավորաց հաշտություն, բրիստոնեից ազատություն տա...» (III, 216): Մաքրագրում ավելացված, բայց դարձյալ անորոշ բաղձանքը հստակ ձևակերպում է ստանում արդեն. բերված խոսքից հետո նա շարունակում է. «Ընչանք մեռնինք ո՛չ, որ մեկ օր էլ էսպես էլով, դյուռով Ռուսի ձեռի տակին նստինք, քեֆ անենք» (III, 32): Սրան հավաքվածներն արձագանքում են «Ա՛մեն, ա՛մեն» ավանդական բացականչություններով: Շարունակելով նույն ոգով, նա ավելացնում է. «Տե՛ր աստված՝ դու մեր Ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ դա, մեզ ազատի, ընչանք մահ մի տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք» (III, 33): Կենացի վրա սովորաբար ասվող այս խոսքերը ե՞րբ են մտել մեր ժողովրդի մեջ, արդյո՞ք Յիցիանովի ու Գուդովիչի երևանյան արշավանքների օրերից, թե՞ դրանից էլ առաջ, որպես վերհուշ Դավիթ-Բեկի կոիվների, դժվար է ասել: Բայց վիպագիրն այստեղ չի չափազանցնում բոլորովին: Ռուսի անունը առաջին անգամ նա պետք է որ լսած լինի իր վաղ մանկություն օրերին:

Ոչ հատուկ դիտավորությամբ, այլ իրական պատմությունը նույնիսկ իր մանրամասների մեջ ճշգրտորեն վերարտադրելու համար նա այստեղ-այնտեղ հիշում է դեպքեր՝ կապված ռուսների հետ, ընդգծում է ռուսների ազնվությունն ու քաջությունը, այս կամ այն ռուս դեներալի ռազմական տաղանդը, նրա ցուցաբերած սրտացավ վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ոչ թե գրքերից ու արխիվային փաստաթղթերից, այլ կենդանի մարդկանց թարմ, վավերագրի արժեք ունեցող հիշողություններից քաղելով, Աբովյանը վերականգնում է պատմությունը հավաստիության սահմաններում, հիշատակում դեպքեր և անուններ, որոնց մասին պատմագրությունը ոչինչ չի թողել: Դրանցից մեկն է դարասկզբի այն խիզախ ռուս զորականը, որը ժողովրդի հիշողության մեջ անմահացել է Ղարա մայրո անունով: Իրեն հանձնված փոքրաթիվ ղինվորներով նա աչալրջությամբ պաշտպանում է Լոռու և Փամբակի սահմանները: Մեկ ան-

գամ Քյալբալի խանը «եղ դառնալիս՝ ուզում ա, որ Փամբակ էլ մեկ ատամին խփի ու որ լսում չի՝ թե Ղարա մառտը, մեկ քանի հարիր մարդից ավելի ո՞չինչ չունի, հրամայում ա, որ գնան, նրան սաղ սաղ բռնեն: Բայց ռսի սալղաթի ու թուփի հունարը դեռ չեն տեսած ըլում ողորմելիքը: Իրեք, չորս անգամ էնքան ղոնշունը վրա է տալիս, բայց տեսնելով՝ թե Ռուսը պատի պես կանգնած՝ գյուլից էլ չի երես եղ դարձնում, փոխանջ կատու ընկած՝ ձիու գլուխը շուռ ա տալիս ու իր հողը գալիս» (111, 57): 1838 թ. գրած ճամփորդական նոթերից իմանում ենք, որ այդպիսի մի հարձակման ժամանակ, անհավասար ու կատաղի մի կռվում էլ զոհվում է այդ լեզենդար զորականը²:

Հայտնի է, թե ինչպես է վերջանում վեպի սեագրությունը: Հանդիսավոր իրադրություն մեջ Երևան են մտնում Պասկևիչը, Կրասովսկին, Ներսեսը, մյուս բարձրաստիճան զինվորականները: Քիչ համարելով դա, մաքրագիր օրինակում, ինչպես ասվեց, նա ցույց է տալիս, թե ինչպես է ընդունում ժողովուրդը ռուսների մուտքը: Միամիտ պետք է լինել կարծելու, թե Պասկևիչին նվիրված մեծարանքի տողերը այս երկում իրոք նրա անձին են վերաբերում: Անշուշտ, դրանք առաջին հերթին վերաբերում են ռուսական հաղթական սրին: Այդ ոգով է հորինված և ժողովրդի մեջ լայն տարածում գտած այն երգը, որ այդտեղ և այլուր բերում է հեղինակը: Պասկևիչի հետ այնտեղ հիշատակվում են նաև Մադաթովի, Կրասովսկու, Բենկենդորֆի, հայ բարձրաստիճան հոգևորականներից Ներսեսի և Եփրեմի անունները: Նրգի վերջին տունն այսպես է սկսվում.

Մենք քամակ քամակի կտանք, վեր կկենանք,
Ռսին մեր աշխարքը, կյանքը ղուրբան կտանք....

Ի՞նչ բանի համար էր հայ ժողովուրդը իր կյանքը ղուրբան անում, նվիրում նրան իր աշխարհը:

Մաքրագիր տարբերակի երկրորդ գլխի սկզբում, Երևանի բերդի կապակցությամբ, ասես այս հարցին պատասխան տալու համար Աբովյանը համառոտակի կանգ է առնում մեր պատմության հիմնական փուլերի վրա: Բուն հայոց պատմությունը նա դիտում է իբրև մի անօրինակ, վիթխարի սխրագործություն, մաքառումի դարեր տևող պատմություն: Հային վիճակված է եղել այնքան անգամ պաշտպանվել, որքան անգամ նա սուր է վերցրել: Բայց իրոք նա սուրը երբեք պատյանը չի դրել: Փոխվել են նվաճողների հագուստն ու լեզուն, փոխվել են բնաջնջման ու ավերի ձևերն ու կերպերը, մեկ հոգնած ցեղին փոխարինել է ուրիշը՝ ավելի բարրաոռսը, բայց Հայաստան աշխարհը չի խաղաղվել, հաշը շունչ չի քաշել: «Է՛ն օրհնյալ հողը, ուր Ասորիք, Պարսիք, Հոնք, Ալանցիք, Մակեդոնացիք, Հռովմայեցիք, Արաբք, Օսմանցիք՝ ջրհեղեղի պես վրա էկան, հարյուրավոր աղզ ու աշխար՝ ոտնակոխ արին, ճնջեցին, սրբեցին, թրի, կրակի մատաղ արին, ուր տեղ որ սար չի՝ մնացել, որ արին շտեմնի, քար չի մնացել, որ մարդ տակով չանի ու հարիր մեր հարևան աղզեր էնպես են հողի հետ հավասարվել, կորել, որ էս օր ոչ նրանց շունչը կա, ոչ անունը, բայց սուրբ Հայոց աղզը, անհաղթելի՝ Հայկա որդիքը՝ իրանց կյանքը, թաղավորությունը,

² Ինչպես պարզել է արավյանագետ Պ. Հակոբյանը, այս հրամանատարի ազդանունը եղել է Մանտրեդոր: Տե՛ս ն. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 7, Երևան, 1956, էջ 455:

մեծությունը, փառքը, իշխանությունը, զորքը կորցնելեն եղև, որ տեսան, թե է՛ս աշխարհակործան ջրհեղեղին, է՛ս գազան ազգերին՝ որ մեկը մյուսի ոտիցը ձուլուակ՝ ուր որ կամենում էին գնալ, Եվրոպա, թե Ասիա, Հայոց հողովը պետք է անց էին կացել, չե՛ն կարող դիմանալ, աչքները երկինքը քցեցին, գլխերները գոգըները դրին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից՝ սիրտ սրտի տը-ված, հոգի հոգու կպցրած, մինչև էս օր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հավա-տը, իրանց սուրբ օրենքը՝ է՛ն վեհանձնությունովը պահպանեցին, որի օրինա-կը աշխարքում ո՛չ էլեւ ա, ո՛չ կըլի, է՛ն աշխարք, էն անօրինակ ազգն էլ էս վերջին ժամանակը՝ շունչը բերանը հասած՝ աչքը երկինքը կթել, որ Ռուսաց հզոր արծիվը գա ու իրանց հողն ու զավակը իր թևի տակովն անի» (III, 54—55)։ Աբովյանը նույնքան իմաստուն էր իր ժողովրդին հասկանալու մեջ, որքան այդ ժողովուրդն իմաստուն էր բարեկամ ընտրելու մեջ։ Միայն և միայն ռուսական օգնությունը փրկեց հայ ժողովրդին ֆիզիկական ոչնչացումից, կըտ-ուով կերպով փոխեց նրա պատմության ընթացքը։

Ծանոթանալով Նոր Աշխարհի հայտնագործության ու նվաճման պատմու-թյանը, երիտասարդ Աբովյանը դեռևս Դորպատում ականա զուգահեռ է անց-կացնում եվրոպական պետությունների՝ ամերիկյան բնիկների և Ռուսաստանի՝ հայերի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի միջև։ «Այժմ,— գրում է նա,— մեր հայացքը դարձնենք դեպի Նոր Աշխարհի բնակիչները, <կտեսնենք>, թե ինչպես այնտեղ ժողովրդի քանակը պակասեց սկսած այն օրերից, երբ ամերի-կացիները եվրոպացիների ստրուկը դարձան. և ինչպե՛ս չքանում են նրանց բո-լոր կապերը, որքա՛ն թմրած և անկենդան են նրանց մտավոր հատկություննե-րը» (VIII, 35)։ Պատմական այս համադրումին նա վերադառնում է նորից ու նորից, ինչպես իր արձակ գործերում, նույնպես և շափածո տողերում։ «Վերք Հայաստանի» վեպում նույն այդ միտքը հետևյալ ձևակերպումն է ստանում. «Քսան տարու միջում լուսավորյալ, քրիստոնյա, խաչապաշտ Եվրոպացոց ոտը՝ ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ վեց միլիոն ազգերիցը՝ էս օր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած, վայրենի գազանների պես են իրանց սև օրը լալիս ու կոտորվում....» (III, 55)։

Աբովյանն իրավացի էր անշուշտ։ Եվրոպացիների և մանավանդ միսիո-ններների համեմատությամբ Ռուսաստանի զինված ուժերները մարդասիրության և օրինականության կրողներ կարող էին համարվել։ Ռուսաստանի տիրապե-տությունը Արևելյան Հայաստանին բերեց ամենակարևորը՝ անձի և գույքի ապահովություն, ինչից նրանք զուրկ են եղել անհիշելի ժամանակներից։ Հենց միայն այդ բավական էր էնգելսի համար, որպեսզի նա գրեր, թե «Ռուսաստա-նը իսկապես առաջադիմական դեր է խաղում Արևելքի նկատմամբ»³։

Այս և մյուս ասույթները Աբովյանի գրչի տակից ելած համարյա բոլոր երկերում լրացնում, հարստացնում են մեր պատկերացումը վեպի գեղարվես-տական գաղափարի մասին, բայց չեն փոխարինում նրան։ Կրկնում եմ, «Վերք Հայաստանի» հեղինակը համոզված ռուսասեր է։ Դա նրա սևեռուն գաղափարն է և՛ որպես արվեստագետի, և՛ որպես մտածողի։

Հպարտությամբ պետք է նշել, որ այդ գաղափարն իր արտահայտությունն է գտնում հայ հասարակական մտքի լավագույն բոլոր ներկայացուցիչների

³ К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, М., 1932, т. XXI, էջ 211։

մոտ, մեծից մինչև փոքր և փոքրից մինչև մեծ, մինչև մեծագույնը նրանցից՝ Հովհաննես Թումանյան:

Ջբաղվելով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու և «Վերք Հայաստանի» պատմականության հարցով, Թումանյանը բերում է երևանյան կոիվներում իր անվեհերության աչքի ընկած դեկաբրիստ Ե. Ե. Լաչինովի վկայությունը հայի և ռուսի սրտաշարժ հանդիպման մասին: Լաչինովը «նկարագրում է տաճկական, պարսկական.... զաղանթյունները, — գրում է Թումանյանը: — Պատմում է, թե ինչպես էին նրանք վազում դեպի ռուսական զորքերը՝ ծեր ու մանուկ, մարդ ու կին, աղաղակելով русь! русь! здрасти! здрасти!.... Իսկ մյուս կողմից «Не бойтесь! не бойтесь!» ձեն էին տալիս սարսափահար գյուղացիներին թշնամու դեմ վազող զինվորներն ու արագացնում էին իրենց վազքը.... Նա, Լաչինովը, պատմում է, թե ինչ սրտառու խանդավառությամբ էր դիմավորում իրենց կեղեքված ու տանջված ժողովուրդն ամեն տեղ, ինչպես էր աղոթում, լալիս ուրախությունից, թե նույնիսկ էն երեխան էլ, որ չոր էր սկսել թոթովել, իրենց տեսնելիս ինչպես էր կանչում «Здрастуй, здрастуй»: էսպես, էն լացախառն ու աղոթախառն «Здрастуй»-ն, որով ողջունում էր բազմատանջ հայ ժողովուրդը ռուսական ազատարար բանակին»....⁴

Հանճարեղ խորաթափանցությամբ Աբովյանը դարձավ հայ ժողովրդի ռուսասիրության հարադատ արտահայտիչը, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության առաջին և ամենախոշոր ներկայացուցիչը հայ նոր դրականության պատմության մեջ:

Հարց կարող է ծագել. մինչև վե՞րջ մնաց Աբովյանն այդ տեսակետին, «Վերքից» հետո չխախտվե՞ց արդյոք նրա համոզումը Ռուսաստանի պատմական դերի նկատմամբ:

Ո՛չ, չխախտվեց: Աբովյանը մինչև վերջ էլ, մինչև իր կյանքի վերջին շունչը հավատարիմ մնաց «Վերք Հայաստանի» վեպում արտահայտված գաղափարին:

Ավելին. հենց այդ հավատարմության մեջ էր թաքնված գաղտնիքը վերջին տարիների նրա ապրած ողբերգության:

Լայնորեն հայտնի է նրա նամակը Ներսես Աշտարակեցուն՝ գրված 1847 թ., այսինքն՝ Հայաստանի ազատագրության քսանամյակի հանդիսավոր օրերին: «Ընդէ՛ր խաբեն զմեզ կեղծաւոր լրագիրք Կովկասի փառօք և բարեբախտութեամբ ազգի, որ յիսկութեան շոինդ է միայն օղածայն: Զի՞նչ օղուտ և փառք մերազնեայց յսղատութենէ Հայաստանեայց....» (X, 295):

Ի՞նչ է սա, վրդովված պահին բերնից թռած խո՞սք, թե քաղաքական համոզում, բոլորովին տարբեր այն համոզումներից, որ նա ուներ առաջ, որ նա արտահայտել էր մասնավորապես «Վերք Հայաստանի» վեպում: Եթե ոչինչ չէր փոխվել, ուրեմն իզո՞ւր գրվեց «Վերքը»:

Հարցի բարդությունն ինքն է հուշում հանգստեանալի մի պատասխան:

Որ «Վերք Հայաստանի» հեղինակն այլևս այն չէր, ինչ 1827 թ. հաջորդած առաջին տասնամյակում, հասկանալի է ինքնին, բայց որ 1844 թ. վեպն ավարտող անճանաչելի պետք է դառնար մի երեք տարի հետո, կաթողիկոսին նամակ գրելու օրերին, — անհավատալի է ուղղակի: Ինչպե՞ս բացատրել:

⁴ Հո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 205—206:

Ցարական տիրապետության մեղրամիսը շատ կարճ տևեց:

Նկարագրելով հայերի անձնուրացության հասնող նվիրվածությունն ու քաջագործությունը, Աբովյանը միաժամանակ ցավով նշում է, որ ցարական կառավարությունը շատ հեռու էր այն ինչպես հարկն է գնահատելուց: Երեկվա այդ քաջերը մի կտոր հաց ճարելու համար այսօր մշակություն են անում Թիֆլիսի փողոցներում: «Մի՞թե էս բայաղիղցիք չէի՞ն, որ երբ մեր զորքը նրանց քաղաքն առավ, մեկ քանի օրից եղը՝ հանկարծ Վանա փաշեն մեծ ղոնշունով որ էկավ, Բայաղդի շորս կողմը բռնեց, էս քաջ Հայերը հոգին ատամների տակն առած՝ է՛ն տղամարդությունը ցույց տվին, որ դեռ Երևան չեկած, շատը աստիճան, խաչ ստացավ: էս օր էլ որ ողորմելիքը Թիֆլիզումը մշակություն անելիս, կամ բաղնաներումը ծառայելիս խոսք ա ընկնում, էն կտրատված շորքներիցը էլի իրենց խաչերը հանում, գոռոզությունով ցույց են տալիս իրենց արնի գինը» (III, 123):

Խաչատուր Աբովյանը քաջատեղյակ էր այն ամենին, ինչ կատարվում էր Անդրկովկասում, գիտեր և՛ գյուղացիության տրամադրությունը, և՛ քաղաքային արհեստավորության, և՛ վաճառականության, շինովնիկության, հոգևոր դասի, պետական բարձրաստիճան գործիչների, գիտնական ճանապարհորդների,— բոլոր խավերին անխտիր: Նա քայլող մի հանրագիտարան էր և իր ժամանակի քաղաքական ջերմաչափը միաժամանակ:

Նրա կենսասիրությունն ու հումանիզմը սահման չէին ճանաչում, ինչպես որ սահման չէր ճանաչում նրա ապրած հիասթափությունը շրջապատից: Այս հակասությունը նրան մղեց այնպիսի մի ողբերգական քայլի, որի մոտ խամրում է նույնիսկ ինքնասպանությունը, որ նա կատարեց ի վերջո: Ես նկատի ունեմ աշխարհիկ կյանքից հրաժարվելու և մենաստան քաշվելու նրա սարսուցենոլ որոշումը: Որովհետև ինքնասպանությունը նրա նման մարդկանց համար քաղաքական գործողություն է, քաղաքական բողոքի ձևերից մեկը, ճիշտ է՝ պասսիվ բողոքի, բայց դարձյալ անհաշտության, դարձյալ ընդվզման: Մենաստանը փրկելով նրա մարմինը (եթե՛ միայն փրկեր), կսպաներ նրա ամբողջ գործը: Դա նույնը կլիներ, եթե նա հոր ճարակ դարձներ իր բոլոր ձեռագրերը:

Նվ աշխուժեցնելով, պատասխանելով ավելի վերը դրված հարցին, նկատեմ, որ նա չէր հրաժարվում «Վերք Հայաստանից»: Որովհետև քաղաքականության մեջ նա ուսմանտիկ էր, ճիշտ է, բայց ոչ ֆանտազյոր: Հանցագործություն է կասկածել նրա ուսասիրության վրա, նրա ուսական կողմնորոշում ունենալու վրա: Աբովյանն այնքան միամիտ չէր, որ մտածեր, թե ավեր մի երկրի վերաշինությունը, այնտեղ նոր վարչակարգ մտցնելը, հայ ժողովրդին կուտուրական ազգերի շարքը հանելու պրոցեսը կատարվելու էր մի քանի տասնամյակում: Խոր հիասթափությունը գալիս էր նրանից, որ արդեն ձեռքից փախցված էր երկու տասնամյակ: Ե՞րբ էր ուտոպիստ Աբովյանը պատկերացնում «հայկական անկախությունը» մի հարց է սա, որին ինքն էլ հաղիվ թե կարողանար պատասխան տալ, քանի որ բացարձակապես ոչինչ չէր նշմարվում այդ ուղղությամբ:

Դարձյալ և մի անգամ էլ. Աբովյանը մինչև վերջ, մինչև իր վերջին շունչը հավատարիմ մնաց «Վերքի» գաղափարին: Մի ավելորդ ապացույց կարող է հանդիսանալ այդ վեպի վերջաբանը:

3.

Վերն ասվեց, որ հավելվածը, որին հեղինակը «Ջանգի» լրացուցիչ խորագիրն է տվել, գրվել է մաքրագիր տարբերակն ստեղծելու ժամանակ, որպես վեպի օրգանական շարունակություն: Այն, իր հերթին, նույնպես երկու տարբերակ ունի: Ասել է թե՛ հասնելով երրորդ գլխի վերջը, հեղինակն առանձին գրում է վերջերգը, ապա թերևս նկատելով, որ այն սյուժետային գծով չի կապվում վիպական հյուսվածքին, մտցնում է նաղլուի մահը և շարունակում արտագրությունը մինչև վերջ:

Այսպիսով, որ «Ջանգին» «Վերք Հայաստանի» վեպի շարունակությունն ու ավարտն է, իմացվում է հենց ինքնագրից: Անշուշտ, այն իմացել է և առաջին հրատարակիչը՝ Փոնդոյանը: Ինչո՞ւ ապա նա այդ մասն էլ չի արտագրել և տպագրության հանձնել: Մի՞թե գրաքննական նկատառումներով, թե՞ արտագրել է դա ևս, բայց հենց գրաքննությունը թույլ չի տվել: Ապա ինչպե՞ս այն թույլ տվեց երկու տարի հետո:

Այդ սխալը փորձ արվեց շտկել երկրորդ հրատարակության ժամանակ, բայց այս անգամ իրոք արգելք հանդիսացավ գրաքննությունը: Ահա՛ թե ինչ է գրում այդ առթիվ Վարդան Աբովյանը Մկրտիչ Բարխուդարյանին ուղղած 1896 թ. հոկտեմբերի 5-ի նամակում. «Ջանգի»-ի վերաբերմամբ ես բոլորովին դարմանում եմ թե՛ ինչո՞ւ քննիչը չէ թույլ տվել տպելու, քանի որ դա տըպված է եղել առանձին գրքույկով և այն էլ խիստ գրաքննության միջոցին՝ Նիկողայոս կայսեր օրոք»⁵:

Աբովյան-որդին սխալվում էր, ասելով՝ «առանձին գրքույկով»: Այն տպագրված է եղել «Կռունկում»: Բայց հարցը տեղին էր: Գրաքննիչը ավելորդ զգուշություն է հանդես բերել այս հարցում: Այն վտանգավոր ոչինչ չէր պարունակում ռոմանովյան դինաստիայի դեմ: Ցավոք սրտի, այս երկու վրիպումները ճակատագրական եղան. ինչպես նախասովետական երկու, այնպես էլ մեր օրերի երկու հրատարակությունների ընթացքում, հավելվածը չգիտվեց իբրև վեպի անբաժան մաս:

Բայց դառնանք հավելվածի ստեղծագործական պատմությանը:

Ինչպես երևում է, այս հավելվածը նախապես մտածվել է իբրև էպիկական շնչով հյուսված մի վերջերգ: Այն հյուսված պետք է լիներ կիսաշափածո, չափածո՝ ավելի ականջի համար, քան աչքի: Առաջին գիրը բաղկացած է եղել տասնմեկ պարբերությունից, որոնցից աշխարհաբար են գրված եղել միայն առաջին երեքը: Երրորդ պարբերության վերջում (ինքնին հասկանալի է՝ աբովյանական պարբերության) հանդիպում ենք մի կտրուկ անցման («էսպես մեկ սարսափելի գիշեր էր որ...»), որ հիմք է տալիս մտածելու, թե լիրիկական զեղումը պետք է փոխվեր էպիկական մի պատմության, բայց հեղինակը չի շարունակել կամ թե գրած չի եղել ասելիքը, և շարունակել է նույն ոգով, ինչով սկսել էր, այս անգամ արդեն գրաբար: Այժմ, երբ ունենք երկրորդ տարբերակը, մեզ համար պարզ է, որ այդ պատմությունը պետք է լիներ նաղլուի այցը Աղասու գերեզմանին և նրա մահը:

Ամբողջությամբ առած ի՞նչ է ներկայացնում իրենից այդ առաջին դիրքումի հանճարեղ օրատորիա՝ հետևյալ թեմայով. «Ջանգի, իմ Ջանգի, դու, որ

⁵ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Մ. Բարխուդարյանի արխիվ, № 5:

հղոր էս, ամենակարող, հարվածի՛ր, ջարդի՛ր քո թշնամիներին, միացի՛ր Երասխին, գնացե՛ք միանալու Քոին, ապա, զորացած, թափվեցե՛ք ծովը, ձեր ջրերը խառնեցե՛ք քույր Վոլգայի ջրերին, ալիքներ կուտակեցե՛ք ալիքների վրա, ջախջախեցե՛ք մեր ընդհանուր թշնամիների նավերը, ստեղծելով հավերժական սեր ու խաղաղություն...»։

Առանց չափազանցություն՝ հոյակապ մտահղացում, որ մշակվելով, առավել կատարյալ է դառնում։ Դերեմ միայն առաջին պարբերությունը, ցույց տալու համար, թե ինչպես է նա աշխատել հենց առաջին տողերի վրա։

«Ինչպես մեկ վիշապ կատաղի՝ երկնքիցը թռած, գլխիվեր ձուլուակ՝ մեկ տուտը Սևանի հանդարտ ծովումը, մեկ տուտը Արաղի քրքրված ղրաղումը, սար ու ձոր կխշոր տալով, քանդելով, տապալելով, քափ ու քրտինքը բերանը կոխած, մաղերը քյալին ցցած, ալեկոծյալ, ծովի պես կապր կտրած, դեղացած, ռեխը՝ քարով, ավազով, դիբիլով լիքը, էս կողմն էն կողմն թքելով, կըտրելով, ձոթելով, ջարդելով, սար ու ձոր տակ վեր անելով, մեկ թևն սևադեմ, մոթնով, շանկով կոխած, լցված, աստիճան աստիճան, խևանդ խևանդ կըտրատած, դոշը, փորը բաց արած, ծառով, թփով զարդարած, նեղ, ձորի աջու ուսովը քցած, բռնած, մեկ թևն ձախու, չոր, տխուր Կաքավասարի տակիցը ական թոթափել վաղում, դուս ա պռծնում հրո՛վ, սրո՛վ, բրո՛վ, բոցո՛վ փրփրալով, փռնալով, մռնալով, խռնալով, քարի, քարափի գլուխ վե՛ր հատելով, իր փորը խցկելով, ճշալով, վեմ, ասպռած իրար ծեծելով, կայծակ տալով, ձռնալով, թնդալով, դղրդալով, ցած ափները, սասանահար գետինը պոկելով, պոճոկելով, փրփրելով, քրքրվելով, կենդանի, անկենդան, իսան, հայվան, գետինն դարկելով, բամբաշելով, խլացնելով, քառացնելով, սրսրթացնելով, վրվրթացնելով դաշտ, տափ դրմբացնելով, դրնդացնելով ամեհի Զանգին ու վրա պրծած, վառված, կրակված, յալը ցցած, աչքերն արյունով լի, ատամները կրճտացնելով, վրա յա վազել գալիս ա, որ՝ Հայաստանի սուրբ գետինը ոտնատակ տվողին, մեր նախնյաց մաքուր գերեզմանները քանդողին, կործանողին, մեր նահատակած արդար, անմեղ արյունը թափողին, կխշորողին, մեր աստվածաբնակ տաճարները, եկեղեցիքը պղծողին, ապականողին, մեր մեծմեծ պայծառաշեն թախթերը, քաղաքները խլողին, ավերողին, մեր անձար, եթիմ, օրվան հացին կարոտ, ցրված, սասանած, գերի ընկած, հարամու ձեռին կոտորված, երկրե երկիր ցրված, փչացած՝ խեղճ ազգի տունը քանդողին, հողի հետ հավասարողին, ու մեր շար հարամու բունը, անօրեն թշնամու տունը, արյուն խմողի այվանն, աշխարքը քանդողի ամարաթը, նրա հոտած քոշքը, նրա բրիշակ սարեն, նրա արյունաշաղախ բերդը, նրա ոսկոռաշեն բուրջը, նրա գողաբնակ տեղը, նրա գաղանաբնակ հողը քա՛նդի, տապալ՛լի, փշրի՛, ավե՛րի, տակ ու գլուխ, գլուխ ու տակ, քարեքար, պատեպատ, հիմնատակ բրիշակ անի, կլանի ու նրանց՝ Աստծու անիծած՝ ներսի սատկողներին, դրսի գլուխգլորներին, գլխումը բուն դնողներին, տակումը մահվան քնով հարփածներին, քշի՛, տա՛նի, սրբի՛, ողո՛ղի, թիբա թիբա, փառշա փառշա՝ շներոց, գիլերոց, սատանեքանց, ջհանդամի կերակուր, փայ անի ու մեր խեղճ աշխարքի, ազգի ողորմելի աղի արտասուքը սրբի, խորոված, մաշված սիրտը հովացնի, զովացնի, որ մեր հազարամյա յարեն թունալից, անբժշկելի, կտրի, վերջացնի՛,— որ հազարների, բյուրավորների ցավամաշ հոգին ուտում, կեղեքում, մաշում, տոչորում, սաղ սաղ, ջրի ջրի, դալար և զվարթ էն անգուլթ աղգին, անողորմ գաղանին շատ տարի, շատ դար ղուրբան էր անում, զոհ տալիս» (III, 364—365)։

Ի՞նչ փոփոխություն է կրել ամբողջ հատվածը վերամշակության ժամանակ:

Նախ, գրված պարբերությունները շատ ավելի են մշակված, ըստ որում ոչ թե փոքրացել են, այլ մեծացել, ոչ թե թեթևացել, այլ ավելի ձոխացել, նորանոր էպիտետներով հարստացել, ծանրաբեռնվել: Ոչ մի հայ գրող, բացարձակապես ոչ մեկը, այդ հնարանքին չի դիմում: Այդ կոտակումների շնորհիվ հեղինակին հաջողվել է ստեղծել տեղի ու միջավայրի հազվագյուտ զորեղ տպավորություն: Շեքսպիրի խոսքերով ասած՝ նա սարսափ է կոտակում սարսափի վրա, մութը փաթաթում է խավարով:

Տրոհելով երրորդ պարբերությունը, բաց թողնելով մի կտոր և ավելացնելով մի ոչ մեծ պարբերություն, — նա անցնում է նազլուի թեմային, մինչ այդ գործողության մեջ մտցնելով Ապովենց Հարությունին: Համարձակ ստեղծագործական քայլ. ումանտիկ շնչով գրված հատվածում մուծել իրական անձի՝ իր հարազատ հորեղբորը: Ամբողջ այս պատկերը շնչում է մի մռայլ գեղեցկությանմբ: Այն դրամատիկ, լարված տրամադրությունը, որ մեզ համակել էր մինչ այդ, այժմ արդեն գտնում է իր բացատրությունը. այդ բոլորը նախապատրաստում էր մեզ՝ հասկանալու հիմնական տեսարանը: Հավանորեն նազլուն երկար ժամանակ է ընկած Աղասու գերեզմանի վրա, հավանորեն երեխաների հետ նա եկել է լույսով: Հարությունն ուրեմն ներս է մտնում եկեղեցու բակ, որ տանի բոլորովին որբացած երեխաներին:

Ուժեղացնո՞ւմ է արդյոք այս պատկերը հոյակապ վերջերգը: Կարծում եմ, որ, այո՞, շատ է ուժեղացնում:

Նազլուի մահը սենտիմենտալ մի հնարանք չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից, այլ հերոսական թեման նորից հնչեցնելու մի միջոց: Ընդհանուրը կենդանացավ մասնավորով, հասարակականը՝ անհատականով: Առանց մանրամասների մեջ մտնելու (ինչպե՞ս բոթը գլուղ հասավ, ինչպե՞ս կատարվեց սրա հողին հանձնելը հենց Աղասու կողքին...) հեղինակն անցնում է հիմնականին այսպիսի մի խոսքով. «Նազլուն էլ գնաց, Աղասին էլ, նրանց երեխեքանց տերն էլ աստված հասցրեց»: Ուրիշ ոչինչ:

Այժմ մնում է, որ ընթերցողը նորից վերադառնա ընդհատված պատկերին՝ Զանգի գետին:

Աղասին չի մոռացվի, ասում է հեղինակը, ինչպես որ չեն մոռացվի բոլոր նրանք, ովքեր սիրել են իրենց հայրենիքը, ընկել նրա համար: Աշխարհս անցողիկ է, և ինչ որ մնացուն է, կապվում է միայն հայրենի օրրանի հետ: «Հայրենասիրությունը միայն քո հիշատակը կտոնի, ազգասիրությունը քո արածը՝ կենդանի կպահի, բեզ սրբի տեղ պաշտիլ կտա: Հայրենյաց հողը քո անգին ոսկերքը, քո սուրբ գերեզմանը ամեն անցկենդի առաջին կկանգնացնի ու մատով ցույց կտա. «Թե ուզում ես, բեզ էլ էսպես սիրեմ, գզվեմ, դու էլ ինձ սիրի, ինձ պայծառացրու, ի՞մ սիրելի որդյակ» (III, 196):

Եվ ահա, Աբովյանը չի կարողանում մի վերջին անգամ չգիմել ընթերցողին, չբացատրել, թե ինչը նրան ուժ տվեց գրիչ վերցնելու և Աղասու պատմությունը գրելու:

Վերջապես՝ անսպասելի անցումը. «Գնա՛նք մեկ Զանգվի դրաղն էլ, մեկ մեր սուրբ Զանգին էլ տեսնինք, մեկ նրա ձորն էլ օրով տեսնենք, շունքի գիշեր էր, որ վրովն անցկացանք...» (III, 196):

Այս Զանգուն այլևս նման չէ նախորդ տողերում նկարագրված Զանգու գետին, ավելի ճիշտ՝ սա նույն գետն է, բայց միանգամայն տարբեր տրամադրության մեջ: Եթե գիշերը նա ցասկոտ էր, կատաղի, վրիժառու, վիրավորված, ապա այժմ նա թեև տխուր է, թեև վշտահար իր ամբերին ծաղկած, իսկ այժմ ավերակ ոստանների համար, նրանց շենացնող մեծազն ու քաջազոր հայորդիների համար, — բայց լի է ապրելու և ոգևորելու վճռականությամբ: Նա ասես լսում է այդ հայրենասերների խրոխտ կոչը. «Ցնծա՛, դուարձացիր, բերկրեա՛ց, փարթամացի՛ր, հրճուեա՛ց, դուարթացի՛ր՝ գեղեցի՛կդ իմ Հրազդան»:

Այստեղից սկսած՝ հեղինակը դարձյալ իր տարբերքի մեջ է: Նրա խոսքի հեղեղն այժմ նորից հիշեցնում է Զանգվի սրբնթաց թափը: Ընդամենը հինգ պարբերություն, հինգ հոյակապ կտոր, բոլորն էլ նույն պաթետիկ գիմնամով, նույն և մի փոքր տարբեր. «Զանգի՛, Զանգի՛, անողոքելի իմ Զանգի», ապա՝ «Զանգի՛, Երա՛խ, Հրազդա՛ն, Արա՛ղ», այնուհետև՝ «Զանգի՛ իմ, Երա՛խ, Մա՛սիս, Աղաղա՛ղ», ևս՝ «Զանգի՛, Զանգի՛, քա՛ղցր իմ Զանգի», վերջապես՝ «Զանգի՛, Զանգի՛, հրաշագե՛ղդ Զանգի»: Հայրենի գետերին, հայրենի լեռներին, հայրենի աշխարհին, հայրենիքի զավակներին ուղղված այսպիսի պաթետիկ կոչով է վերջանում դորժը: Դա կոչ է արթնացման, կոչ է ինքնաճանաչման, կոչ հայրենասիրության:

Եվ դարձյալ նույն սեեռուն հարցը: Ո՞ւմ հետ:

Միայն Ռուսաստանի: Միայն ռուս ժողովրդի:

Զանգին Երասխի միջով իր ջրերը պետք է խառնի Վոլգայի ջրերին: «Բացէ՛ք զճակատ ձեր, ցնծացէ՛ք յամայր. իմ քաղցր Վոլգայ քոյր հոգայ միշտ ոճե՛ս ճար: Ես զի՛մ մտերմութիւն ցուցից նմա համակ, նա զիւր քաղցրութիւն տացէ՛ ձեզ՝ որդեակք: Այս կապ անխզուն, այս սէր սրբազան մնասցէ՛ ի մեջ մեր ի կեանս յավիտեան: Դուք զօրացարո՞ւք՝ որդի՛ք Արամեան. եղբորուք ընդ միմեանս սիրով միաբան: Սէ՛ր, խաղաղութիւն պահեն զամենայն զազգս և զազինս ի բարօրութեան»:

«Զանգին» նույն «Վերք Հայաստանին» է՝ մի մեծ, հոյակապ երգի մեջ ամփոփված: Դա հայ գրականության անմահ գլուտներից է: Այստեղ է դրված դարաշրջանի քաղաքական գաղափարը: Այստեղից է սկիզբ առնում Ռուսաստանի հետ լինելու գաղափարը՝ արտահայտված գեղարվեստական հանձարեղ մի երկի մեջ:

4.

Բայց կառույցը դեռ պատրաստ չէր: Նրան պակասում էր մի կամար, մի դավիթ:

Հերոգոտը պատմում է. «Այսպիսի բախտ վիճակվեց Կրեսոսին: Նա մի որդի ուներ, որի մասին ես արդեն հիշատակեցի, խուլուհամր, թեև արժանավոր մի մարդ ամեն տեսակետից: Իր բարեբախտության վաղեմի օրերին Կրեսոսը անում և ձեռք է առնում ամեն միջոց՝ բուժելու համար որդուն, ընդ որում պատգամավոր է ուղարկում Դելֆիոս՝ այդ մասին հարցում անելու պատգամախոսին: Պիթիան այս պատասխանն է տալիս. «Մնունդով միգրացի, թագավոր շատ ժողովուրդների, չափից ավելի պարզամիտ Կրեսոս, մի բաղձալսելու տանդ մեջ ձայնը քո խոսող որդու, որ այնպես սաստկագույն ունկնդրել ես ուղում դու: Առավել բարի է, որ նա մնա խուլուհամր, քանզի առաջին անգամ խոսելու է ճակատագրական մի օր»: Բերդը գրավելիս պարսիկներից ինչ-որ

մեկը, չձանաչելով Կրեսոսին, դեպի նա է նետվում, նպատակ ունենալով սպանել: Նկատելով այդ, Կրեսոսը, որ խորտակված էր իրեն հասած աղետից, մնում է տեղում զամված՝ անտարբեր դեպի մահը: Բայց նրա խուլուհամր որդին, որ սարսափից խելակորույս էր դառնում, տեսնելով պարսկին, բացականչում է. «Մա՛րդ, մի՛ սպանիր Կրեսոսին»: Այդ պահին նա խոսում էր առաջին անգամ և այդպես էլ խոսեց մինչև իր կյանքի վերջը»⁶:

Հոգեբանական խորիմաստ այս համեմատությամբ է սկսվում առաջաբանը: Եվ ահա անսպասելի, բայց համահնչուն այդ համեմատությանը մենք ականատես ենք լինում այնպիսի մի խոստովանության, որպիսին սովոր ենք հանդիպել միայն «Մատյան ողբերգության» մեջ: Հենց առաջին խոսքերից հեղինակը գերում է մեզ իր անկեղծությամբ: Ի՞նչն է նրան ուժ տալիս այդքան սրտամոտ լինել ընթերցողի հետ: Կրեսոսի համր որդուն այդ ուժը տվել է որդիական սերը, «Վերքի» հեղինակին՝ սերը հայրենիքի նկատմամբ:

Փնտրեցե՛ք որքան կուղեք, միևնույն է, դուք չեք գտնի մեկ ուրիշ բառ, որ այնպես արտահայտի հեղինակի հոգեվիճակը, ինչպես այդ համար բառ-սլափ-կերը: Միայն համրը կարող է տոշորվել հայրենիքի սիրով և շխոսել. «...Բայց ա՛խ՝ լեզուս փա՛կ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարձ, գանձ չունեի, որ գործով ցույց տայի ուղածս, անունս մեծ չէր՝ եր ասածս տեղ հասնի. մեր գրքերն էլ զբաբառ, մեր նոր լեզուն էլ անպատիվ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի»:

Այն, ինչ մինչ այդ նա կատարել էր իր գիտական շարադրություններում ու նամակներում, այժմ անում է մի պարզ պատմությամբ. ասացուցում է նոր լեզվի կենսական անհրաժեշտությունը... պատմելով իր ապրումների մասին: Առաջաբանի այլեցնող թարմության գաղտնիքներից մեկն էլ խոհականի և առօրեականի այս անբաժանելի հարևանության մեջ է: Չգիտես, թե որտեղ է վերջանում ազգի անցյալն ու ներկան քննող փիլիսոփայան և որտեղ սկսվում նոր լեզվի ռեֆորմատորը: Երկուսի հետ է հայրենասերը, որ ասես ներողություն է խնդրում՝ այդքան հայրենասեր լինելու համար: Մի պահ նույնիսկ թվում է, թե նա հոգնել է լարված բանավեճերից, դիմում է այժմ ո՛չ նրանց, ովքեր անհուսալի գիտուն են, այլ նրանց, ովքեր անմեղ են իրենց ձեռքն առաջին գիրքը վերցնելու շափ: Մի հանձարեղ պայծառատեսությամբ նոր լեզվի պահանջը նա բխեցնում է գրականության նոր բովանդակությունից. ոչ թե (ոչ միայն) լեզուն պետք է ստեղծի գրականություն, այլ ստեղծվող գրականությունը պետք է բերի իր լեզուն: «Ուզում էի շատ անգամ մաղերս պոկելմ՝ որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվըներումը նրանք կարդում էին ևրևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին է՛ն բաները, որ մարգի սիրտ կարող է գրավիլ, շունքի սրտի բաներ էին՝ ո՞վ չի սիրիլ: Ո՞վ չի ուզիլ լսիլ՝ թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կոխվը ի՞նչ դատ են, բայց մեր լեզվումը՝ թե էսպես բաներ ըլին, թո՛ղ աչքս հանեն»:

Կողմնորոշվելուց առաջ Արուսյանը կողմնացույց է հայտնաբերել: Ունենալով առասպելական Օրփեոսի լսողությունը, նա ունկնդրել է ժողովրդին առավելապես այն պահերին, երբ սա ուրախացել կամ տխրել է և անսխալ որոշել նրա զեղագիտական պահանջը: Եվ ահա մեր հեղինակն առանց տատան-

⁶ Геродот. История в девяти книгах, М., 1885, т. 1, էջ 44:

վելու ընդառաջում է այդ պահանջին: Այսպես է ծնվում ժողովրդական հերոսով ժողովրդին դաստիարակելու որոշումը:

Մենք հիմա դիտենք, որ Առաջաբանը սոսկ արձանագրում էր հեղինակի մտքերի հնարավոր այն ընթացքը, որ արդեն իրականացված էր: Աբովյանը չի փորձում արդարանալ, նա միայն բացատրում է, թե ինչպես հասավ Աղասուն հերոս ընտրելու գաղափարին: Մենք գիտենք, որ դա այդպես չէ, որ Աղասու գյուտը նա վաղուց էր արել, բայց այժմ նա առաջաբան էր գրում և ոչ թե հիշողություն: Կարևորն այս դեպքում այն է, որ ժողովրդական քաջին դիմելուն նա սկզբունքային նշանակություն է տալիս: Նա գիտեր, որ դրանով փոխում էր գրականության հերոսին և փոխում էր հենց գիտակցաբար:

Հետագա նկարագրությունն այն մասին, թե ինչպես է նա սկսել, ինչպես գրել վեպի առաջին «թաբաղաները»՝ ուտեղծագործական գերագույն պահերի բանաստեղծական վերարտադրությունն են: Հայտնի է, որ այսպիսի հրեղեն պահեր նա շատ է սպրել՝ և՛ այս երկը սկսելիս, և՛ այն գրելիս, և՛ ընդհանրապես գրիչ վերցնելիս: Դա նրա բնավորությունից է բխում, ինչպես որ առյուծի բնավորությունից է բխում երկունքի պահին մոնչյունով լցնել շրջապատը: Բայց Առաջաբանի հեղինակը գիտակցաբար այն կապում է վեպի հետ:

Ահա՛ և պատճառաբանությունը. «Սիրելի կարդացող՝ շնեղանաս՝ որ բանն էսքան երկարացրի: Էնդոր համար եմ էստոնք հիշում, որ իմանաս՝ թե ազգի սնունդ ի՞նչ լազաթ ունի, ի՞նչ զորություն»:

Համեմատությունը բարձրացավ մինչև հերոսական բովանդակություն: Համը երիտասարդի լեզուն բաց արեց որդիական սերը. բնության հազվագեղ մի երևույթ: Այստեղ մաս չունի գիտակցությունը: Ուրիշ է այն մյուս սերը: Սա ևս սեր է, անշուշտ, բայց բարձրացած գիտակցականության բարձրագույն աստիճանի: Սա զարգացման որոշակի ճանապարհ կտրած հասարակական մարդու սեր է, սեր դեպի այն հավաքական մարմինը, որ կոչվում է ազգություն, որի մեջ խտացած է հոգևոր վիթխարի հարստություն: Հենց այս տեսակ սիրո մասին է խոսում դարեր առաջ հայտնաբերված աֆորիզմը. «Զգիտակցը ված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»:

«Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման, — ասում է Աբովյանը, — երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց»:

Ահա՛ ձեզ և ամբողջ Առաջաբանը՝ մեկ խոսքի մեջ:

Առաջաբանը ծնվեց՝ լուսավորելու համար վեպի առաջ ընկած անհայտ ճանապարհը: Հեղինակը չգիտեր, թե ինչպիսին է լինելու այդ ուղին, թեև իհարկե հոգու աչքերով տեսնում էր նրան հեռու-հեռուներում, գալիքի մեջ: Մի բան նա չէր կարող կռահել. որ կզան նաև օրեր, երբ ոչ թե վեպը կտանի իր փոքրիկ Առաջաբանը, այլ հենց Առաջաբանը՝ վեպին: Սրա պատճառը վեպի թուլությունը չէ, այլ Առաջաբանի ուժը: Մի քանի հարյուր արձակ տողերի մեջ հեղինակն այնքան զգացմունք և այնքան միտք է դրել, որ կարող է իմաստավորել մի ամբողջ գեղարվեստական գործ: Մեկ հարյուրամյակից ավելի է, ինչ ընթերցողը գերագույն հաճույք է քաղում նրանից. իմաստություն և հենց հաճույք, գեղագիտական բերկրանք: Երկու ծայրահեղություններ՝ գերագույն զգացմունքը և գերագույն միտքը հեղինակը որսացել է հենց հանդիպման պահին, և ահա բռնկվել է մի բոց, որի լույսը այսօր էլ նույնքան է ուժեղ, որքան և ջերմությունը:

«Թո՛ղ ինձ այսուհետև տգետ կանչեն. լեզուս բաց ա էլել՝ ի՛մ ընտիր, աղիղ, ի՛մ սրտի սիրեկան աղղ: Թո՛ղ տրամաբանություն գիտեցողը իրան համբյարի համար գրի, ես, քո կորած, շվարած որդին՝ քեզ համար»:

Սրանք հայ նոր գրականության չգրված մանիֆեստի առաջին տողերն են: Մենք սիրում ենք Աբովյանի մեջ տեսնել ստեղծողին, հիմնադրին, բայց դրանից առաջ նա քանդող է, ավերիչ կլասիցիզմի և նույնիսկ սենտիմենտալիզմի: Որպեսզի «Վերքին» ճանապարհ մաղթի, հստակորեն մատնացույց է անում, թե նա ուր պետք է գնա: Գոյություն ունեցող գրական արտադրանքը նա ճեղքում, բաժանում է երկու մասի՝ ժողովրդական գրականություն և ժողովրդից վեր կանգնած գրականություն: Նա այս վերջին գրականության ձևական կողմերի մասին չի խոսում, այլ նրա բովանդակության, նրա կոչման: Մեծ խորամտություն պետք չէ «քերականություն գիտցողի» տակ հասկանալու կլասիկ գրողին և «համբյարի» տակ այն բարձր խավին, որին և ծառայում էր այդ գրողը: Ուրիշ է իմ աշխարհը, — ասում է Առաջաբանի հեղինակը: Դա բուն ժողովուրդն է: Հասարակ ժողովուրդը, ինչպես ասում էին այն ժամանակ: Ոչ թե փոքր վերնախավը, այլ հենց աշխատավորական հոծ մասսան: Այն, որ կրում է պատմությունը, որ առաջ է մղում պատմությունը:

Եվ այդ տողերը թղթին հանձնելիս նա իր թիկունքին զգացել է ժողովուրդ կոչվող հսկայի վիթխարի հասակը:

ИДЕЙНАЯ СУЩНОСТЬ РОМАНА «РАНЫ АРМЕНИИ»

Н. А. МУРАДЯН

(Р е з ю м е)

Основоположник новой армянской литературы Хачатур Абовян был великим певцом дружбы с Россией. Вопрос о роли России в освобождении армянского народа связан с его политическим мышлением.

В последние годы жизни Абовяна в его политических взглядах имел место определенный перелом, что было связано с разочарованием, вызванным политикой царского правительства в Закавказье. Некоторые исследователи склонны были рассматривать это изменение как отказ Абовяна от идей, нашедших отражение в романе «Раны Армении». Но анализ структуры романа, его композиции, хода развития центральной идеи приводит к выводу, что Абовян был и до конца остался убежденным сторонником вечной дружбы с русским народом. С особой отчетливостью это видно в приложении его романа («Зангу»), которое является как бы вдохновенной песней, подводящей итог всему роману.